I

ԲՈՐԻՍ ՊԻՈՏՐՈՎՍԿԻ

(Մեծդյան 90-ամյակի առթիվ)

Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ

Այս տարի լրացավ նշանավոր հնագետ, գիտության վաստակավոր գործիչ, պետական մրցանակների դափնեկիր, բազմաթիվ շքանշանների ասպետ, ԽՍՀՄ և ՀՀ ԳԱ ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկու ծննդյան 90-ամյակը։

Բ. Բ. Պիոտրովսկին ծնվել է 1908 թ., փետրվարի 14-ին, Պետերբուրգում։ Հայրը՝ Բորիս Իրոնիսլավի Պիոտրովսկին, ծագում էր Սիբիր աքսորված լեհ ընտանիքից, մաթեմատիկայի և մեխանիկայի ուսուցիչ էր և այդ ժամանակ ուներ արդեն փոխգնդապետի կոչում։ Մայրը՝ Սոֆյա Ալեքսանդրովնան, նույնպես մանկավարժ էր։ Բ. Բ. Պիոտրովսկին ուներ երեք եղբայր։ Նախնական կրթությունը երեխաները ստացել են տանը մոր հետ պարապելով։ Հոր աշխատավայրի փոփոխությունների հետ կապված Բորիս Պիոտրովսկին իր միջնակարգ կրթությունը ստացել է տարբեր քաղաքներում (Օրենբուրգ, Լենինգրադի 200-րդ դպրոց)։ Աշակերտական տարիներից էլ սկսվում է նրա հրապուրանքը հին Եգիպտոսով։

1930 թ. Բորիս Պիոտրովսկին ավարտում է Լենինգրադի համալսարանի Պատմալեզվագիտական ֆակուլտետը։ Ուսանողական տարիներին են լույս տեսնում եգիպտագիտության ուղղությամբ երիտասարդ գիտնականի գրած առաջին հոդվածները[1]։

1927 թ. Բ. Պիոտրովսկին մասնակցում է Հյուսիսկովկասյան՝ Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի [ՆՄՊՊԱ (ГАИМК), ավելի ուշ՝ ԽՍՀՄ ԳԱ Հնագիտության ինստիտուտ] դաշտային աշխատանքներին. այնուհետև՝ 1929 թ., ընդունվում է աշխատանքի ՆՄՊՊԱ-ում։

1931 թ. Ս. Յա. Մառի հանձնարարականով նա ընդունվում է աշխատանքի Պետական էրմիտաժում. էրմիտաժի դիրեկտոր Բ. Վ. Լեգրանը, որը լավ ծանոթ էր Բ. Պիոտրովսկու գիտական գործունեությանը, հրամանագրում է նրան որպես Նախնադարյան մշակույթի պատմության բաժնի կրտսեր գիտաշխատող համատեղության կարգով։ Բ. Պիոտրովսկու հիմնական աշխատավայրը մնում է ՆՄՊՊԱ-ն։

Ղեկատարիրը բարեհաճ էր Բ. Բ. Պիոտրովսկու նկատմամբ։ Բնությունը նրան օժտել էր նկարչի (նա է նկարազարդել իր շատ գործընկերների աշխատանքները) ու բանաստեղծի շնորհով ու իմաստնությամբ, իսկ շրջապատում կային մեծ թվով տաղանդավոր մարդիկ, որոնցից շատերին նա աշակերտեց՝ Ն. Դ. Ֆլիաներ, Վ. Վ. Ստրուվե, կովկասագետ-հնագետ Ա. Ա. Միլլեր, Նիկողայոս Մառ, Հովսեփ Օրբելի։

Երևանական թվականներին դաժան քննադատության էին ենթարկվում հնագիտության ամենահիմնարար հասկացությունները և ձգտում կար վերաիմաստավորելու դրանք[2]։ Սակայն նույնիսկ իր ամենավաղ ուսումնասիրու-

---

[1] Б. Б. Пиотровский. По поводу древнеегипетского «железа».—ДАН, серия В, 1929, № 1; он же: Das Karnak—Relief des Hohenpriesters Amenhotepe.—ДАН, серия В, 1929, № 6.

[2] *Տե՛ս օրինակ, այն օրերի* «Сообщения ГАИМК»-*ի պատ. խմբագիր Ս. Ն. Բիկովսկու հոդվածները՝* С. Н. Быковский. О предмете истории материальной культуры.—Сообщения ГАИМК, 1932, № 1—2, с. 3—6; С. Н. Быковский. К пересмотру археологической терминологии.—Проблемы истории материальной культуры, 1933, № 5—6, с. 10—12.

թյուններում նա չշեղվեց դասական հնագիտության կանոններից (որի համար և մեղադրվում էր «ակադեմիզմի» մեջ)[3]։ Ուղավ, թերևս, միայն մեկ բացառությունն՝ նա միգրացիոն տեսության հակառակորդն էր երկար ժամանակ։

Եգիպտոսը, իր մշտական երազանքների երկիրը, հեռու էր ու անմատչելի, իսկ «Հին Արևելքը»՝ անչափ մոտ, Հայաստանում. և ահա, Նիկողայոս Մառի խորհրդով Բ. Բ. Պիոտրովսկին որոշում է զբաղվել ուրարտագիտությամբ և 1930 թ., ՆՄՊԱ-ի Հայաստանի կիկլոպյան ամրոցներն ուսումնասիրող արշավախմբի հետ, որի կազմում էին նաև Էրմիտաժի գիտաշխատակիցներ Լևոն Գյուզալյանն ու Անտոն Հաչյանը, նա մեկնում է Հայաստան։ Հայաստանում՝ Հնությունների պահպանության կոմիտեի կողմից այդ աշխատանքներին մասնակցելու է գործուղվում Եվգենի Բայբուրդյանը[4]։

Արշավախմբի նպատակն էր Հայաստանի ամրոցների, դամբարանադաշտերի և սեպագիր գրավոր տվյալների փոխկապակցված ուսումնասիրությունն ու այդ ամրոցների դասակարգումն ըստ տեղադրության, քարի մշակման ու ճարտարապետական առանձնահատկությունների ու ժամանակագրության. մեծ ուշադրություն էր դարձվում ամրոցի և բնակավայրի փոխտեղադրության խնդրին։ Շիրակում, Արագածոտնում և Գեղարքունիքում ուսումնասիրվեցին բազմաթիվ ամրոցներ. դրանք պարզունակ չափագրվեցին ու լուսանկարվեցին. հավաքվեց վերգետնյա նյութը։ Այս արշավախմբի գործունեությամբ սկսվեց Հայաստանի կիկլոպյան ամրոցների ուսումնասիրության մի նոր փուլ, քանի որ ստեղծվեց գիտելիքների մի հանրագումար, որի հիման վրա կառուցվում էին հետագայի շատ տեսակետներ։

Արշավախմբի գործունեության արդյունքում բացահայտվեցին մի շարք հետաքրքիր օրինաչափություններ, օրինակ. «Выбор места и однородность строительного материала определялись условием и характером местности, значение которых было тем больше, чем ниже был уровень техники»[5].

Այսպիսի, անկասկած, կարևոր դիտողություններով ու միայն հավաքված վերգետնյա նյութի ուսումնասիրությամբ հնարավոր չէր ստույգ որոշել այդ ամրոցների հիմնադրման ժամանակը. և ահա, Բ. Պիոտրովսկին կատարում է հաջորդ քայլը, սկսում է այդ ամրոցներից մեկի՝ Ծովինարի (ուրարտական ժամանակների «Թեյշեբա աստծու քաղաքի» ուսումնասիրությունը։ Ակնհայտ դարձավ, որ կիկլոպյան ամրոցների թվագրությունը միանշանակ չի կարող լինել, քանի որ նույնիսկ այս, առաջին հայացքից ուրարտական ամրոց-բնակավայրը բազմաշերտ է։ Բլուրը բնակեցվել է վաղ բրոնզի դարում. կյանքն այստեղ հարատևել է մինչև միջնադար, և հարցերից ամենաբարդը, նաև այսօր, տվյալ ամրոցի կառուցապատման սկիզբը հնագիտական որոշակի հորիզոնի հետ փոխկապակցելու խնդիրն է մնում։ Անմիանշանակ մի խնդիր, որը Պիոտրովսկուն հաջողվեց լուծել Կարմիր բլուրի պեղումների ընթացքում։ 1936 թ. Պիոտրովսկին մասնակցում է նաև Հ. Ա. Օրբելու գլխավորած Ամբերդի արշավախմբի աշխատանքներին, դաշտում ընկալելով նաև հայ միջնադարյան հնագիտության հիմնախնդիրները։

---

[3] Б. Б. Пиотровский. Страницы моей жизни. СПб., 1995, с. 92.

[4] А. А. Аджян, Л. Т. Гюзалян и Б. Б. Пиотровский. Циклопические крепости Закавказья.—Сообщения ГАИМК, 1932, №1—2, с. 61—64; Б. Б. Пиотровский и Л. Т. Гюзалян. Крепости Армении доурартского и урартского времени.—Проблемы истории материальной культуры, 1933, №5—6, с. 51—59. Իրենց շատ ժամանակակիցների նման, այս արշավախմբի բոլոր անդամներն էլ տարբեր ժամանակ ենթարկվեցին անհիմն հետապնդումների. 1935 թ. մարտին, շուրջ մեկուկես ամսով կալանավորվում է Բ. Պիոտրովսկին, 1938 թ.՝ Լևոն Գյուզալյանը և Անտոն Հաչյանը, քիչ ավելի ուշ՝ 1939 թ.՝ Եվգենի Բայբուրդյանը։ Անտոն Հաչյանը և Եվգենի Բայբուրդյանը զոհվում են կալանավայրում. արդարացվեցին ետմահու (Страницы моей жизни, с. 10, 122—123, 151).

[5] А. А. Аджян, Л. Т. Гюзалян и Б. Б. Пиотровский. Указ. соч., с. 62.

Հայաստանում աշխատելուց բացի, Պիոտրովսկին համագործակցում էր նաև Սուխումիում (1935 թ.), Թերմեզում, Մոզդոկում և Մերվում (1936 թ.) գործող արշավախմբերի աշխատանքներին, որոնցից յուրաքանչյուրի մասին նա ներկայացնում է գիտական հաշվետվություն, որոնք այն ժամանակ իր ղեկավարների կողմից բնութագրվում էին որպես «արժեքավոր ներդրում սովետական գիտության մեջ»[6]։ 1938 թ., Պիոտրովսկուն, առանց դիսերտացիայի պաշտպանության, շնորհվում է պատմական գիտությունների թեկնածուի կոչում։

1939 թ. Կարմիր բլուրի պեղումներով սկսվում է Բ. Բ. Պիոտրովսկու կենսագրության մի նոր փուլ. նրա կյանքն ու գործունեությունը անխզելիորեն կապվում են Հայաստանի ու այդ հուշարձանի հետ։

Էրմիտաժի արխիվում պահպանվել է Ն. Դ. Ֆլիտների կողմից 1938 թ. Պիոտրովսկուն տրված բնութագիրը, որով կարծես ամփոփվում է մինչ այս անցած նրա ուղին։ Այստեղ կան և հետևյալ տողերը։



«Одно перечисление работ, осуществленных Борисом Борисовичем за три года, указывает, наряду с чрезвычайной широтой охвата (Египетские древности на Северном Кавказе, археология Средней Азии, работы по материальной культуре Ассирии) тем, на то, в каком плане Б. Б. Пиотровский подходит к ним: Древний Восток для него не является самоцелью, но той основой, при детальном знании которой мы только в состоянии правильно понять и оценить историю культур, входящих в состав нашего Союза, генетически и преемственно связанных с этой основой»[7].

Կարմիր բլուրի տեղագիտական ուսումնասիրությունները սկսվել են 1927 թ.։ Այս ուսումնասիրությունների համար շարժառիթ եղավ եկեղեցու և միջնադարյան այլ կառույցների գոյությունը բլրի վրա։ 1939 թ. սկսվում են Կարմիր բլուրի պարբերական պեղումները՝ Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի (արշ. պետ.՝ Կ. Գ. Ղաֆադարյան), ԽՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի (արշ. պետ.՝ Ս. Վ. Տեր-Ավետիսյան) և Պետական Էրմիտաժի (արշ. պետ.՝ Բ. Բ. Պիոտրովսկի) միացյալ ուժերով և ավարտվում են 1971 թ., պատերազմի տարիների եռամյա ընդմիջումով։ 1945 թ. արշավախմբերի միացյալ ղեկավարությունը վստահվում է Բ. Բ. Պիոտրովսկուն (Ս. Վ. Տեր-Ավետիսյանը, որի հետ համատեղ էին նրանք վերջին տարիներին ղեկավարում արշավախումբը, վախճանվել էր 1943 թ.)։

Կարմիր բլուրի պեղումներն սկսելուց առաջ և դրանց ընթացքում նա հանգամանորեն ուսումնասիրում է տարածաշրջանի ոչ միայն հնագիտական ու սեպագրական աղբյուրները, այլև հավաքում ու մեկնաբանում է ուրարտական հուշարձանների մասին եղած ժողովրդագրական նյութը։ Այս ամենը՝ գումարվելով հուշարձանախմբի պեղումներով հաստատագրված տվյալնե-

---

6 Տե՛ս Панорама Эрмитажа, 1990, № 18, с.4.

7 Նույն տեղում։

ին, հիանալի արդյունք տվեց՝ գրվեց Հայ ժողովրդի և Ուրարտուի պատմությանն ու մշակույթին նվիրված իր հիմնաքարային մենագրությունը[8]։

Գիրքը հիմնականում շարադրվեց պատերազմի տարիներին[9], պաշարված Լենինգրադում։ Այս օրերի մասին է իր հետևյալ հուշագիրը։

«Научная работа очень облегчала нам тяжелую жизнь. Чувство голода со временем переходило в физическое недомогание, и так же, как всякое недомогание, оно легче переносилось в работе».

Նա էրմիտաժի հրշեջ պաշտպանության պետի տեղակալն էր և իր ընկերների հետ պարտավոր էր վնասազերծել տանիքին ընկած հրձիգ ռումբերը։

Բ. Բ. Պիոտրովսկին գործուն մասնակցություն ունեցավ էրմիտաժի ցուցանմուշների փրկման աշխատանքներին և երբ էրմիտաժի ցուցանմուշներն ու ֆոնդերի նյութը ուղարկվեց խոր թիկունք, նա Հ. Ա. Օրբելու և իր մի քանի գործընկերների հետ տեղափոխվեց Երևան։ Այստեղ նա ավարտեց ու 1944 թ. հրատարակեց իր «Ուրարտուն»[10]։ Գիրքը ձոնված էր Լենինգրադի պաշտպանության ժամանակ զոհված երիտասարդ գիտնականների պայծառ հիշատակին։ Նույն տարվա հունվարի 30-ին, Հայաստանի Գիտությունների Ակադեմիայում իր այս աշխատանքը նա պաշտպանեց որպես դոկտորական դիսերտացիա։ 1944 թ. էր նաև, որ Բ. Բ. Պիոտրովսկին պարգևատրվում է «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով, իսկ 1946 թ. «Ուրարտուի» համար նրան շնորհվում է ԽՍՀՄ պետական մրցանակ։

Նոր տվյալներով հարստացած ու վերաշարադրված այս գիրքը վերահրատարակվեց 1959 թ. Մոսկվայում, «Վանի թագավորությունը» խորագրով[11]։ Գրքի պատասխանատու խմբագիրն էր Հ. Ա. Օրբելին։

«Վանի թագավորությունը» Ուրարտուի մասին մինչ այս հայտնի բոլոր տվյալների հանրագումարն էր։ Երկրի մշակութային կյանքի մասին բաժինները շարադրված էին հիմնականում Վանի, Թոփրաք կալեի և Կարմիր բլուրի նյութերի վերլուծության հիման վրա։ Բացի այս, մեծ աշխատանք էր կատարված գիտական շրջանառության մեջ դնելու համար չհրատարակված, սակայն աշխարհի տարբեր թանգարաններում և արխիվներում պահվող ուրարտագիտական նյութը։ Սա Ուրարտուի պատմությանն ու մշակույթին նվիրված թերևս յոթերորդ նշանակալից հրատարակությունն էր, Լեմանհաուպթի, Լեոյի, Ադոնցի, Ղափանցյանի և Մելիքիշվիլու աշխատանքներից հետո և ուներ իր նախորդներին որոշ չափով նման կառուցվածք. նույնիսկ գրքի վերնագիրը՝ «Վանի թագավորությունն», կրկնում էր Լեոյի աշխատության խորագիրը։ Նախորդ հրատարակությունները, բնական է, որ չէին կրկնում միմյանց. դրանցից յուրաքանչյուրը, բնագավառ առ բնագավառ, ունեին նորույթներ ու ճշգրտումներ. հիմնականում՝ ըստ հեղինակների նեղ մասնագիտական նախասիրությունների։ Պիոտրովսկու «Վանի թագավորությունը» ավարտն ու պսակն էր այս շարքի, Կարմիր բլուրի անչափ հետաքրքիր նյութերով լրացված ու տաղանդավոր հնագետի լայն մտահորիզոնով շաղախված հանրագումարը՝ եղած բոլոր նշանակալից փաստերի։ Բացի այն, որ «Վանի թագավորությունը» գրքում շրջանառության մեջ էր դրվում մեծաթիվ նոր և կամ նորովի մեկնաբանված նյութ, անկյունաքարային էին այնտեղ կատարված դիտարկումները՝ կապված Ուրարտուի աստվածությունների պատկերագրության և ուրարտա-սկյութական փոխառնությունների հետ՝

---

8 Б. Б. Пиотровский. История и культура Урарту. Ереван, 1944.

9 Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Բ. Բ. Պիոտրովսկին աշխատում էր Կարմիր բլուրում։

10 Գրքում շեշտադրված չէին ուրարտերեն լեզվում և մշակույթում դիտվող հնդեվրոպական շերտերը, թեև, այնուամենայնիվ, անտեսված չէին այս մասին եղած կարծիքները։ Շեշտերի այս բացակայությունը, անձնական մի զրույցի ժամանակ նա բացատրեց ոչ միայն իր համոզվածությամբ, այլև քաղաքական իրադրությամբ, որն այն ժամանակ տիրում էր երկրում.

11 Б. Б. Пиотровский. Ванское церство. М., 1959.

երկու, մինչ այս նվազագույնս ուսումնասիրված թեմաներ, որոնք այնուհետև դարձան ուսումնասիրության առանձին բնագավառներ թե՛ արվեստաբանների և թե՛ արևելագետների համար։

Ուրարտագիտությունը հանգչում է երեք հզոր խարսխաքարերի վրա՝ ուրարտական սեպագիր արձանագրություններ, ասուպ-բաբելական սկզբնաղբյուրներ, հնագիտորեն հաստատագրված նյութ։

Այժմ հայտնի է ուրարտական սեպագիր շուրջ 600 տեքստ, որոնցից ավելի քան 230-ը հայտնաբերված են Կարմիր բլուրից։ Բացի այս, Կարմիր բլուրում է գտնվել նաև այժմ հայտնի հիերոգլիֆ արձանագրությունների ու նշանների մի մեծ մասը։ Հատկանշական է նաև, որ ասուրա-բաբելական սկզբնաղբյուրներից ու Հին Կտակարանից արված այն ընտրությունը, որը և հետագայում առաղձը դարձավ Ի. Մ. Դյակոնովի անչափ արժեքավոր՝ «Ասուրա-բաբելական աղբյուրները Ուրարտուի պատմության վերաբերյալ» աշխատանքի համար, կատարված էր Բ. Բ. Պիոտրովսկու ջանքերով[12]։

Հայաստանի բնակավայրերի հնագիտական պարբերական ուսումնասիրությունները սկսվել են 1879 թ., Թոփրաք կալեի պեղումներով, ու բավականին խոշոր ընդմիջումներով շարունակվել են մինչև 1938 թ.։ Մինչև 1939 թ., Ուրարտուի նյութական մշակույթի մասին եղած պատկերացումները հիմնվում էին միայն Վանի ժայռափոր հուշարձանների ու Թոփրաք կալեի ուսումնասիրություններով ի հայտ եկած ու, թերևս նաև, 1938 թ. Ալթին թեփեում պատահաբար բացված դամբանից հայտնաբերված նյութերի վրա։

1939 թ. Կարմիր բլուրի պեղումներով սկսվեց Ուրարտական հուշարձանների պարբերական հնագիտական ուսումնասիրությունների երկրորդ խոշոր շրջափուլը, որը շարունակվում է և այժմ։ Եթե նույնիսկ հիշատակվեն միայն այն հարցերը, որոնք իրենց պատասխանն ստացան Կարմիր բլուրի պեղումների շնորհիվ, կլցվեն էջեր. ասենք միայն, որ այդ հարցերն առնչվում էին Ուրարտուի կրոնի, ճարտարապետության, քանդակագործության, դրվագման արվեստի, որմնանկարչության, խեցեգործության, կնիքագործության, մետաղամշակության, գյուղատնտեսության, ինչպես նաև քաղաքաշինության, առևտրի ու մշակութային փոխառնչությունների հետ ընդհանրապես։ Ահռելի էր այն ինֆորմացիան, որը եկավ Կարմիր բլուրից հայտնաբերված արձանագրությունների քննությամբ։

Կարմիր բլուրի պեղումները հանգուցային էին նաև մեկ այլ կարևորագույն պատմամշակութային խնդրի՝ ուրարտա-էթիունյան էթնոմշակութային փոխառնչությունների ուսումնասիրության առումով, քանի որ ինչպես հաստատվեց կատարված պեղումներով, Կարմիր բլուրի բնակատեղին հիմնադրվել է ուշ բրոնզի դարում, իսկ մ. թ. ա. VII դարում հին բնակավայրի որոշ թաղամասեր, իրենց բնակչությամբ հանդերձ, ընդգրկվել են նորակառույց ուրարտական Թեյշեբաինի քաղաքի կազմում։

Կարմիր բլուրի նախաուրարտական բնակավայրը, փաստորեն, Հայաստանի Հանրապետությունում ուսումնասիրված առաջին ուշ բրոնզ—վաղ երկաթիդարյան համալիրն էր (բնակավայր ու դամբարանադաշտ)։ Կարմիր բլուրի պեղումները կարևոր էին նաև հելլենիստական Հայաստանի մշակույթի ուսումնասիրության առումով, քանի որ այստեղ, բնակավայրի տարածքում, բացվեցին և ուսումնասիրվեցին վեց դամբարաններ, որոնք թվագրվեցին № 1 դամբարանից հայտնաբերված Ալեքսանդր Մակեդոնացու արծաթ դրամով։

Կարմիր բլուրում կյանքը շարունակվել է նաև վաղ միջնադարում, որտեղ գոյատևել է մի պաշտպանված դաստակերտ. և այս անգամ ևս, Կարմիր բլուրի դաստակերտի պեղումներով է սկսվում նման բնակավայրերի հնագիտական ուսումնասիրությունը Հայաստանում։

---

12 И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту.—Вестник древней истории, 1951, № 2, с. 262.

Պեղումների մասին առաջին հաշվետվությունները լույս տեսան 1939—1940 թթ.[13]։ Այնուհետև, 1950, 1952 և 1955 թթ. «Հնագիտական պեղումներ Հայաստանում» մատենաշարով (1—2, 5—6) հրապարակվեցին Կարմիր բլուրի պեղումները ներկայացնող չորս պրակներ։

Բ. Բ. Պիոտրովսկու որդեգրած սկզբունքը, այն է՝ իր ղեկավարած արշավախմբի նյութը իր աշակերտներին ու գործընկերներին տրամադրելը և այդ նյութի ուսումնասիրության համար ամենանպաստավոր պայմաններ ստեղծելը, հիանալի արդյունք տվեց[14]։

Վերոհիշյալ հաշվետվություններից բացի, Բ. Պիոտրովսկին հրապարակեց տարբեր հոդվածներ 1953 թ. հետո ընկած տարիների պեղումների արդյունքների մասին. սրանց գումարվեց նաև Կարմիր բլուրի ալբոմի հրատարակությունը, որտեղ մեկ հատորի մեջ ամփոփ ներկայացված էր Կարմիր բլուրի՝ գեղարվեստական առումով ամենաարժեքավոր դիտված նյութը[15]։

1962 թ. լույս տեսավ Բ. Բ. Պիոտրովսկու «Ուրարտուի արվեստը», որը մինչև այժմ մնում է որպես ուրարտական արվեստի մեկնաբանության նվիրված չգերազանցված մի աշխատություն։ Այստեղ քննարկված է Ուրարտուի արվեստն իր գրեթե բոլոր դրսևորումներով. ներառյալ և ամենատարբեր նյութերից շինված առարկաների պատրաստման տեխնոլոգիան ու պատկերների իմաստաբանությունը։ Աշխատության մեջ առանձնահատուկ ուշադրություն էր դարձված աշխարհի տարբեր թանգարաններում պահվող ուրարտական արվեստի գործերի ի մի հավաքմանն ու համադրությանը։ Այս տեսանկյունից աշխատանքի նկատմամբ ունեցած մոտեցման մասին կարող է պատկերացում տալ Պիոտրովսկու կատարած՝ դեռևս 1877 թ. գյուղացիների կողմից Թոփրաք կալեում հայտնաբերված ու մասերի բաժանելուց հետո վաճառքի հանված՝ արձանիկներով հարդարված բրոնզե (իսկ ժամանակին ոսկե նրբաթիթեղով պատված) գահավորակի վերականգնման փորձը։ Բ. Բ. Պիոտրովսկին, հիմք ունենալով Ս. Դևկանցի՝ Կ. Պ. Պատկանյանին հասցեագրած նամակը, որտեղ կար այդ գահավորակի նկարագրությունը, կարողացավ հավաքել ու իր գրքում նկարագրել այդ գահավորակի 17 մասերը, որոնք պահվում են վեց երկրների յոթ տարբեր թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում[16]։ Աշխատության մեջ առանձնահատուկ ուշադրություն էր դարձված նաև ուրարտա-ասուրական, ուրարտա-փռյուգական, ուրարտա-հունաստանյան և էտրուսկյան, ինչպես նաև ուրարտա-սկյութական մշակութային փոխառնչությունների խնդրին։

Կարմիրբլուրյան արշավախումբը 1951 թ. սկսում է պեղումներ կատարել նաև մեկ այլ հանգուցային հուշարձանում՝ Արին բերդում (Էրեբունիում)։

Կարմիր բլուրի արշավախմբի գործունեությունը նպաստավոր էր ոչ միայն հնագետների, այլև արևելագետների համար, քանի որ Երևանի ու Լենինգրադի երիտասարդ արևելագետներից շատերը հինարևելյան նյութական

---

13 Б. Б. Пиотровский. Предварительный отчет о раскопках археологической экспедиции Эрмитажа на Кармир-блуре, около села Чарбах 1939 г.—Известия Арм. фил. АН СССР, 1940, № 3, с. 18—25; К. Кафадарян. Раскопки Кармир-блура (1939).—Там же, с. 26—36; С. В. Тер-Аветисян, Б. Б. Пиотровский. Кармир-блур (предварительный отчет о раскопках 1940 г.)—Известия Арм. фил. АН СССР, 1940, № 4—5, с. 147—164.

14 Տե՛ս օրինակ՝ К. Л. Оганесян. Архитектура Тейшебаини, Кармир-блур IV. Ереван, 1955; А. А. Мартиросян. Город Тейшебаини. Ереван, 1961; Н. В. Арутюнян. Новые урартские надписи Кармир-блура. Ереван, 1966; И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.—Л., 1963; А. А. Вайман, Г. А. Тирацян. Кармир-блурский некрополь эллинистическоого времени.—Вестник обществ. наук АН АрмССР, 1974, № 8, с. 60—70 և ուրիշ։

15 Б. Б. Пиотровский. Кармир-блур (альбом). Л., 1970.

16 Б. Б. Пиотровский. Искусство Урарту. Л., 1962, с. 44—53.

մշակույթի հետ իրենց առաջին ու անմիջական «հանդիպումն» ունեցան հենց Կարմիր բլուրում։

Չնայած գոյություն ունեցող շուրջ 800-ամյա ընդմիջմանը, այժմ ընդհանրություններ են մատնանշվում Թռեղք-վանաձորյան և վանտոսպյան մշակույթների միջև, ընդհանրություններ կան խեցեղենի որոշ տեսակների, ձևերի, զարդարվեստի որոշ դրսևորումների[17], թաղման ծեսի (դիակիզման ու դիաթաղման ծիսակարգերի համակցված գոյություն) և այլ առումներով։ Եվ ուշագրավ է, որ Պիոտրովսկու կատարած մյուս խոշոր ներդրումը Հայաստանի և Անդրկովկասի հնագիտության բնագավառում հենց միջին բրոնզիդարյան հուշարձանների ուսումնասիրությունն էր և Կիրովականի դամբարանի պեղումները, որով և սկսվում է Թռեղք-վանաձորյան (կիրովականյան)[18] մշակույթի հիմնավոր ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությունում։ Այս մշակույթի ծաղկումը նա կապում էր կիսաքոչվոր անասնապահության հետ, գտնելով, որ լեռնային շրջանների հարուստ, անասնապահությամբ զբաղվող ցեղերը, որոնք վերահսկում էին նաև տարածաշրջանի՝ հիմնականում պղնձի հանքավայրերը, միջին բրոնզի դարում առաջնություն են ստանում քաղաքական ու մշակութային կյանքում, ամրապնդում են կապերը հին աշխարհի այլ երկրների հետ։

Կիրովականի դամբարանը պեղվեց 1948 թ. օգոստոսին։ Այն ժամանակ այժմ Թռեղք-վանաձորյան անվանված մշակույթի ամենամոտ զուգահեռները փնտրվում էին հիմնականում խեթական աշխարհում։ Այս առումով ուշագրավ է Բ. Բ. Պիոտրովսկու տեսակետն այն մասին, թե Թրիալեթյան մշակույթը ճիշտ չէ անմիջականորեն առնչել բուն խեթական մշակութային կենտրոնների հետ. իր կարծիքով այն կարող էր անմիջականորեն առնչվել Հայասայի հետ. երկիր, որտեղ ձևավորվել էր հին ու յուրատեսակ մի մշակույթ, որը խեթական կայսրության անկումից հետո շարունակեց գոյատևել Դայաենի-Դիաուեխե երկրում[19]։ Այս երկրի անվան հետ է առնչվում Մեծ Հայքի Տայք աշխարհի անունը. Դիաուեխե անվանված թագավորության տարածքը, սակայն, ավելի ընդարձակ էր։ Դիաուխեն երկար ժամանակ Վանի թագավորության հզորագույն ախոյանն էր հյուսիս-արևմուտքում և մնաց այդպիսին մինչև մ. թ. ա. VIII դարի առաջին կեսը ներառյալ։

Բ. Բ. Պիոտրովսկին հիանալի գիտեր հինարևելյան գրավոր ու հնագիտական սկզբնաղբյուրները։ Անդրկովկասի հնագիտության մասին, մասնավորապես, նա դասախոսություններ էր կարդում Լենինգրադի համալսարանում։ Այդ դասախոսությունների արդեն հղված սեղմ տարբերակը հրատարակվեց 1949 թ. և երկար տարիներ սեղանի գիրք էր տվյալ տարածաշրջանի պատմությամբ հետաքրքրվողների համար։ Ընդ որում, Պիոտրովսկու չիրականացած երազանքներից մեկն էր այս գրքի վերախմբագրված հրատարակության պատրաստումը, որի համար նա այդպես էլ ժամանակ չունեցավ։

Եվ ահա, հենվելով այս, ինչպես նաև հայ վաղ միջնադարյան ու հունահռոմեական սկզբնաղբյուրների համադրությամբ ստեղծված հիմքի վրա, 1946 թ. նա կարողացավ գիտնականների սեղանին դնել անչափ հետաքրքիր մի աշխատանք՝ «Հայ ժողովրդի կազմավորման խնդրի շուրջ» վերնագրով[20]։

---

17 R. Merhav. Cauldrons and Their Stands.—Urartu—A Metalworking Center in the First Millennium B. C. E., Jerusalem, 1991, p. 233.

18 Այն տարիներին Բ. Պիոտրովսկին չէր օգտագործում «Թռեղքյան. բնական է նաև Թռեղք-կիրովականյան» մշակույթ հասկացությունները, համապատասխան ենթատեքստերում օգտվելով՝ «Թրիալեթյան դամբարաններ», «Թրիալեթյան հուշարձաններ» և կամ «Թրիալեթյան դամբարանների նյութեր» հասկացություններից։

19 Б. Б. Пиотровский. Археология Закавказья, с древнейших времен до I тысячелетия до н. э. (курс лекций). Л., 1949, с. 46; Б. Б. Пиотровский. Новые данные о древнейших цивилизациях на территории СССР, М., 1955, с. 6—9.

20 Б. Б. Пиотровский. О происхождении армянского народа, Ереван, 1946.

Նվալով շատ փոքրիկ այս աշխատությունը պատասխան պետք է տար որոշ կարևոր հիմնահարցերի ու մասնավոր խնդիրների. հիմնահարցերից կարևորագույնն էր, թերևս, Վանի թագավորության և հայկական պետականության միջև դիտվող տարբերությունների բացահայտումը և այդ պետական կազմավորումների բնութագիրը, որն այժմ անչափ պարզ ու հասկանալի է հնչում. այն է՝ Վանի թագավորությունը բազմէթնիկական մի երևույթ էր՝ հիմնված ցեղային միությունների կառույցի վրա. երկրում ուրարտացիք մեծամասնություն չէին կազմում, իսկ երկրի մշակույթն ու լեզուն ունեին պաշտոնական,պետական բնույթ։ Վանի թագավորությունը, հինարևվելյան շատ այլ պետական կազմավորումների նման, հեռանկար չունեցավ, քանի որ, ի տարբերություն հայկականի, չկար պետության հիմքը կազմող մի ժողովուրդ։

Անդրադառնալով Արմենիա (Արմինա), Սոմխեթի և հայ-Հայք հասկացությունների ծագման խնդրին, առաջինը նա համամիտ էր ծագեցնել Սարգուրի II-ի (760—730 թթ.) տարեգրությունում հիշատակված Արմե KUR(Arme)[21] երկրի ու թագավորության անունից, որի կենտրոնն էր Նիխիրիանի-Նփրկերտը։ Արմե երկիրը Պիոտրովսկին համադրում էր Շուբրիայի հետ։ Գիտնականի կարծիքով հենց այս իշխանությունն է մ. թ. ա. VII դարում գլխավորել հայկական հարավ-արևմտյան դաշնությունը։

Հայաստանի Սոմխեթի վրացական անունը նա կապում էր ասուրական և խեթական սկզբնաղբյուրներում վկայված Սուխմու-Սուխմա երկրանվան հետ (համապատասխանում է Չորրորդ Հայքի Դեգիք գավառին)։

Առավել հետաքրքիր, ցավոք՝ միայն առանձին շտրիխներով ձևակերպված և այժմ առավել արդիական է Բ. Բ. Պիոտրովսկու մոտեցումը հայ հասկացությանը։ Հայտնի է, որ հայ և Հայք երևույթների ծագումը մեզանում բացատրվում է տարբեր կերպ՝ ա. ծագում նախահոր անունից, բ. Հայասա երկրի անունից, գ. Հաթի անվանված երկրների անունից, դ. էթիունի դաշնության անունից։

Պիոտրովսկին հակված էր, թերևս, հայ անունն առնչել Հայասայի անվանը, սակայն, իր խոսքերով ասած՝ անհասկանալի էր մնում, թե ինչպես Հայասա երկրանունը, որը հայտնի է միայն խեթական աղբյուրներից, անցել է հայերենին։ Պատասխանը նա գտնում է Պ. Կրեչմերի օգնությամբ, որը Հայասա երկրանունը կապում էր պատմական Հայաստանի հյուսիս-արևմուտքում բնակվող խայ (Χάοι, Դիոդորոս, 14, 29,1) ցեղի անվան հետ։ Այս առումով ուշագրավ է, որ Դիոդորոսի մոտ խայոյներ ցեղանունը հիշատակված է այնտեղ, ուր Անաբասիսում հիշատակված են տաոխները (տայեցիները, Դիաուեխե երկրի բնակիչները. երկիր, որի անունը կարող էր ծագած լինել Տի-հայո նախաձևից, կազմված տի «մեծ» արմատով)[22]։

Հիմք ունենալով Պ. Կրեչմերի այս դիտողությունը, Պիոտրովսկին գտնում էր, որ լեռնաշխարհում առաջինին զուգահեռ գոյություն է ունեցել մի երկրորդ հայկական դաշնություն (հյուսիս-արևմտյանը), որը և գլխավորում էր այս՝ հայեր կամ խայեր անվանված ցեղը։ Իր կարծիքով, հայ ժողովրդի պատմության փուլերից մեկում, երբ թուլանում է հյուսիս-արևմտյան (արմենական) դաշնությունը, առաջնությունը լեռնաշխարհում անցնում է հայերի կողմից գլխավորվող քաղաքական միությանը. և սա է պատճառը, որ ժողովուրդը, որին հարևանները ավանդաբար անվանում էին արմենի (արմինա), ինքն իրեն անվանում է հայ։

---

21 Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи, М., 1960, № 156, Д1+ДII, стрк. 11.

22 Հմմտ. Արմեն Պետրոսյան. Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածնման խնդիրը. Երևան, 1997, էջ 96։ И. М. Дьяконов. Урарту, Фригия, Лидия.—В кн.: История древнего мира (расцвет древних обществ). М., 1989, с. 52.

Եթե հիշենք այն, որ Բ. Բ. Պիոտրովսկին թռեղքյան մշակույթի ամենամոտ զուգահեռները առաջարկում էր փնտրել հենց Հայաստանում (Դիաուեխեում), ապա անհասկանալի է մնում այն, թե ինչո՞ւ նա չի կատարել հաջորդ, ինքնին սպասելի քայլը, այն է՝ չի առաջարկել կապակցել հայ էթնոսը թռեղքյան մշակույթի հետ։ Բնական է ենթադրել, որ պատճառը նախ և առաջ Տալքի սահմաններում եղած հնագիտական ուսումնասիրված սկզբնաղբյուրների սակավությունն էր։ Բայց, ըստ երևույթին, ոչ միայն այս. Պիոտրովսկին, ինչպես ակնառու է, տեսնում էր առնվազն երկու հզոր էթնիկական խմբեր, որոնց միաձուլմամբ հենց ավարտվեց հայ ժողովրդի կազմավորումը լեռնաշխարհում. իսկ հայերի ու արմենների միաձուլումը (մշակութային, էթնիկական, քաղաքական) իր կարծիքով, կարող էր սկսվել մ. թ. ա. VII դարից, ուրարտական պետության թուլացմանը զուգահեռ։ Իսկ եթե հայ ժողովրդի կազմավորման խնդիրը կապվի միայն մեկ ցեղային միության կամ էթնիկական-քաղաքական այլ կազմավորման հետ ու թվագրվի ավելի վաղ, դուրս կմնային հայ ժողովրդի կազմավորմանը մասնակցած մյուս տարրերը։ Ավելացնեմ միայն, որ այժմ Հայաստանում, Վրաստանում և Ռուսաստանում շարունակվում է թռեղք-վանաձորյան մշակույթի տարածման ժամանակագրական ու աշխարհագրական սահմանների ճշգրտումը. ավելին, այժմ, մ. թ. ա. երրորդ հազարամյակի վերջից ձևավորված այդ մշակույթի կրողների հնդեվրոպական ծագումը կասկած չի հարուցում[23]։ Մյուս կողմից, այն, որ այս մշակույթի ձևավորման ու ծաղկման փուլը նախորդել է հին խեթական թագավորությանը, բացառում է խեթական պետական մշակույթի ունեցած ազդեցության մասին վարկածը թռեղքյանի վրա. այսինքն՝ խոսքը առայժմ կարող է գնալ միայն ընդհանրությունների մասին։

Բ. Բ. Պիոտրովսկին այս գրքույկում, «Ուրարտուում» և «Վանի թագավորությունում» հանգամանորեն շարադրել է նաև իր մոտեցումները Հայաստան—Ուրարտու հիմնախնդրին, նախ և առաջ, բացառելով որևէ էթնիկական այնպիսի մի տեղաշարժ դեպի լեռնաշխարհ, որը կարող էր օժանդակել հայ ժողովրդի ձևավորմանը, բացառյալ սկյութական արշավանքները՝ որոնք օժանդակեցին Հայկական պետության կազմավորմանը, սակայն գենետիկական առումով սկյութական տարրի առկայությունն այստեղ էական չէր։ Նա գտնում էր, որ վերջին հաշվով հայերը ծագում են Ուրարտուն ձևավորող ժողովուրդներից, իսկ մշակութային առումով՝ հայ ժողովուրդը ուղղակի ժառանգորդն է համաուրարտական մշակույթի. մշակույթ, որի արմատները նա փնտրում էր լեռնաշխարհի էնեոլիթ-բրոնզիդարյան մշուշում։

Բ. Բ. Պիոտրովսկին ամենագործուն մասնակցությունն ունեցավ «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի և «Հայկական կերպարվեստի պատմության» լույս ընծայմանը, առաջինի համար համապատասխանաբար շարադրելով «Ցեղային միություններից դեպի պետություն», Ուրարտուի «Արհեստներ», «Արվեստ, կրոն, գիր, գրականություն»[24], իսկ երկրորդի համար՝ «Материальная культура армянского нагорья» և «Памятники Урартского искусства» գլուխները[25]։

---

23 Այս մասին մեզանում, հանգամանորեն տե՛ս Г. Е. Арешян. Индоевропейский сюжет в мифологии населения междуречья Куры и Аракса II тыс. до н. э.—ВДИ, 1988, №4, с. 84—102; Г. Е. Арешян, В. Э. Оганесян, Ф. М. Мурадян, П. С. Аветисян, Л. А. Петросян. Конец среднего бронзового века в междуречье Аракса и Куры.—Историко-филологический журнал (далее: ИФЖ), 1990, №1, с. 53—74; А. Е. Симонян. Новая трактовка социокультурной общности средней бронзы Армении.—ИФЖ, 1990, №1, с. 188—207; Է. Վ. Խանզադյան. Միջին բրոնզեդարյան մշակույթն ու Մեծամորի № 59 դամբարանը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1996, № 1—2, էջ 231—244։

24 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. Երևան, 1971, էջ 279—288, 376—420։

25 Տե՛ս Очерки по истории армянского изобразительного искусства. Ереван, 1979, с. 6—36.

1960-ական թթ. սկզբին Պիոտրովսկին կրկին անդրադառնում է եգիպտագիտությանը, քանի որ ընդգրկվում է եգիպտական հուշարձանների փրկման UNESCO-ի ձեռնարկած աշխատանքներում և 1961—1963 թթ. ղեկավարում է խորհրդային հնագիտական արշավախմբի գործունեությունը Նեղոսի հովտում։ Այդ աշխատանքների արդյունքներն ամփոփվեցին երկու գրքերում[26]։

Ընդհանուր սումամբ, ականավոր հնագետի հրապարակված աշխատությունների անվանացանկը անցնում է 500-ից։ Նա ընտրվել է աշխարհի բազմաթիվ ակադեմիաների և այլ գիտական հիմնարկների իսկական, թղթակից կամ պատվավոր անդամ[27]։

Գիտական աշխատանքին զուգահեռ Պիոտրովսկին զբաղվել է գիտակազմակերպչական գործունեությամբ։ Երկար տարիներ նա եղել է Պետական Էրմիտաժի տնօրենի գիտական գծով տեղակալ, Լենինգրադի պետական համալսարանի Հին Արևելքի պատմության և բանասիրության ամբիոնի վարիչ, 1964 թ. սկսած նա Էրմիտաժի տնօրենն էր և իր վերջին աշխատությունն էլ նվիրված էր աշխարհի ամենահարուստ այս թանգարանի պատմությանը։

Բ. Բ. Պիոտրովսկին վախճանվեց 1990 թ. հոկտեմբերին։ Իր երկարամյա գիտական-մանկավարժական գործունեության ընթացքում նա պատրաստեց Հայաստանի հնագիտության տարբեր ճյուղերով զբաղվող շատ հնագետներ։ Եվ այժմ էլ նրանք կամ իրենց աշակերտները գործում են Հայաստանում։ Չնայած վաղուց արդեն դադարել են Կարմիր բլուրի և Էրեբունու պեղումները և այդ հուշարձանները դարձել են թանգարաններ, բայց շարունակվում են Հայաստանի այլ ուրարտական հուշարձանների պեղումները։

1990 թ. գրված բազմաթիվ մահախոսականներից մեկում Բ. Բ. Պիոտրովսկին դիտվում էր որպես կենդանի մի կապ՝ պետերբուրգյան ինտելիգենցիայի և հետո եկած ինտելեկտուալների միջև. մեզ համար նա եղավ այն կենդանի հանգույցի շյուղերից մեկը, որը հայ հնագիտությունը շաղկապեց ռուսաստանյան արևելագիտական դպրոցին։

БОРИС ПИОТРОВСКИЙ
(К 90-летию со дня рождения)

С. Г. АМАЯКЯН

Резюме

Деятельность Б. Б. Пиотровского—выдающегося археолога, заслуженного деятеля науки, лауреата государственных премий, академика — неразрывно связана с Арменией. Свои первые полевые исследования здесь он предпринял непосредственно после окончания историко-лингвистического факультета Ленинградского университета, летом 1930 г. Две его статьи, посвященные циклопическим крепостям Армении, не потеряли своей актуальности до сих пор. В 1939 г. с раскопками Кармир-блура начинается новый этап в биографии ученого. Он все свои силы посвящает исследованию истории и культуры Ванского царства, издав множество книг и статей, которые стали фундаментальными для изучения проблемы образования армянского народа, а также истории урартской цивилизации. Б. Б. Пиотровскому—ученику Н. Д. Флитнера, В. В. Струве, А. А. Миллера, Н. Я. Марра и И. А. Орбели—в 1950-70-е годы удалось в Ереване сплотить вокруг себя одаренных молодых сотрудников, которые впоследствии стали его учениками в Ленинграде, в частности, в Эрмитаже, директором которого он являлся долгие годы. В итоге, в Армении образовалась новая археологическая школа, которая продолжает свою деятельность по сей день.

---

26 Տե՛ս Б. Б. Пиотровский. Древняя Нубия. М., 1964; Б. Б. Пиотровский. Вади Аллаки—путь к золотым рудникам Нубии, М., 1983.

27 Այս մասին հանգամանորեն տե՛ս Б. Б. Пиотровский. Страницы моей жизни. с. 281—285.